ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՌԱԴԻՈ-ԵԼՈՒՅԹԸ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սովետական Մեծ Միության Կառավարությունն ընդառաջելով սփյուռքի հայության խնդրանքին՝ դեկտեմբերի 2-ին ընդունել է մի պատմական որոշում, որով թույլատրվում է արտասահմանյան հայերին վերադառնալու իրենց սրբազան հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Հարազատ կառավարության այդ սքանչելի որոշումը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը և Հայրապետությունը ողջունել են սրտի անհուն բերկրանքով և խորին երախտագիտական զգացմունքով: Հայ ժողովրդի պանծալի պատմության մեջ այդ որոշումը արձանագրում է մի նոր պայծառ էջ. վերջապես իրականանում է սփյուռքի ցիրուցան հայության նվիրական իղձը, նրա վեհ տենչը՝ հավաքվել իր ազատագրված և պաշտելի պապական օջախի շուրջը ու իր հարազատ եղբայրների հետ ձեռք ձեռքի տված՝ լծվել նրա վերելքին, ապրել նրա բարիքներով, սնվել ու զարգանալ նրա բարձր ազգային կուլտուրայով:

Մի քանի օր առաջ Հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ տոնեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման փառապանծ 25-ամյակը: Մենք բախտ ունեցանք Հայաստանի կառավարության հրավերքով ներկա գտնվելու Գերագույն Սովետի հոբելյանական սեսսիային, ուր ականատես եղանք ոչ միայն հայ բանվորի ու գյուղացու, նրա առաջավոր ինտելիգենցիայի, այլ և Սովետական Մեծ Միության եղբայրական Ռեսպուբլիկաների ներկայացուցիչների բուռն ոգևորությանը և արդար հպարտությանը վերածված Հայաստանի 25-ամյա մեծ նվաճումներով: Իրոք, ավերակների ու մոխրի միջից կենդանություն առած Հայ ժողովուրդը 25-ամյա իր անխոնջ աշխատանքով, Սովետական իշխանության ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ արժանացավ անկախ ռեսպուբլիկա ունենալու բախտին և տերը դառնալու իր սուվերեն իրավունքների. Հայաստանը այդ 25 տարվա ընթացքում գիտության, գեղարվեստի և կուլտուրայի ասպարեզներում չտեսնված հառաջադիմություն ունեցավ: Տնտեսապես հետամնաց Հայաստանը արդյունաբերական և ծաղկած գյուղատնտեսության մի երկիր դարձավ: Եվ բնական է, որ նա, իմ ժրաջան Հայ ժողովուրդը, իր ազատ երկրի նվաճումներով պարծենալու իրավունք ունի նաև այն պատճառով, որ նրան օգնում և ոգևորում է ռուս մեծ ժողովուրդը ու Միութենական ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, ազգերի ազատարար Մեծ ՍՏԱԼԻՆԸ:

Այս տեսանկյունից է, որ Միութենական կառավարության պատմական որոշումը այժմեական է, և որ այս 25 տարվա բուռնաջան աշխատանքի նվաճումները հնարավորություն են տալիս Հայաստանի կառավարությանը գրկաբաց ընդունելու արտասահմանի իմ սիրասուն ու բազմաշարշար զավակներին:

Ահա թե ինչու Սովետական Հայաստանի 25-ամյա տարեդարձը և Սովետական Մեծ Միության կառավարության վերոհիշյալ որոշումը արտասահմանի հայության համար արտակարգ ոգևորության և ցնծության տոն է:

Այսօր, երբ Սովետական Միությանն և դեմոկրատիկ պետությունների ընդհանուր ցանկությունն ու պահանջն է տևական խաղաղություն տալ աշխարհին և բոլոր ազգերի ու պետությունների անձեռնմխելիությունը ապահովել, երբ դեմոկրատիկ երեք մեծ պետությունները՝ Սովետական Միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները ու Մեծ Բրիտանիան մտածում են վերացնել աշխարհից բռնությունը, հարթել կատարված անարդարությունները ու ապօրինությունները, և շարքագործել բարոյական նորմաներով դատապարտելի արարքները, այլ վերականգնել արդարությունն ու իրավունքը, Մենք չենք կամենում կասկածել, որ երբ Սովետական կառավարությունը արտասահմանյան հայության իր սրբազան հայրենիքը վերադառնալու հարցն է լուծել, դեմոկրատիկ Մեծ պետությունները, հատկապես ժողովուրդների Մեծ Առաջնորդ ՍՏԱԼԻՆԻ հանճարեղ միտքը, չէք կգտնեն նաև հայ ժողովրդի արդար պահանջը դրականապես լուծելու և նրան վերադարձնելու Տանկաստանի կողմից բռնությամբ գրավված իր պապական հողերը, միացնելով այն բուն երկրին՝ Սովետական Հայաստանին:

Մաղթում եմ Ամենաբարձրյալին, որ ուղղամտություն ներշնչե դեմոկրատիկ պետություններին համերաշխությամբ լուծելու հայ հին պատմական ժողովրդի արդար դատը:

Մաղթում եմ Բարձրյալին, որ նա վարձահատույց լինի Ռուս մեծ ժողովրդին և Սովետական Մեծ պետության, նոցա՝ Հայ ժողովրդի և նրա պատմական իղձերի կատարման նկատմամբ ցուցաբերած բարյացակամ և արդար աջակցության առթիվ: Մաղթում եմ Ամենակալին շնորհել Ազգերի Մեծ Առաջնորդ, մարդկության արդար իրավունքների պաշտպան Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ երկար և բարօր կյանք, առնապայծ ևս նույնպիսի ծեռնարկների պաշտպան հանդիսանալու:

Մաղթում եմ Ամենաբարձրյալին, որ իր նովանին սփռե գաղութահայ կարոտակեզ ժողովրդի վերա և առաջնորդե նորան իր պապական հայրենի երկիրը, որտեղ ցնծությամբ և գորովով սպասում է նրան Մայր Հայաստանի ժողովուրդը: Աստվածային այս օրհնության միացնում եմ նաև Ս. էջմիածնի և Հայոց Հայրապետության օրհնությունը ու արտալի բարի գալուստ մաղթում:

Այլև մաղթում եմ Արարչին պարգևել աշխարհին խաղաղություն, որ մարդկությունը ազատ ապրի, աշխատի և զարգացնի իր մշակույթը, աշխարհի առաջադիմության և իր իսկ երջանկության համար:

Կաթողիկոս Ամենայն Հայոց՝
ԳԵՎՈՐԳ Ջ